

Դեկտեմբեր ամսվա տոնացույց

1. Դեկտեմբերի 7-ին 1988թ.Սպիտակյան երկրաշարժի զոհերի հիշատակի օր: Աղոթքներ առ Աստված:
2. Դեկտեմբերի 9-ին ս.Աննայի հղությունը ս. Մարիամ աստվածածնով: Սուրբ Պատարագ ժամը 13:00
3. Դեկտեմբերի 17-ին Ձմեռ Պապի այցելություն և Ամանորյա շնորհավորանքներ Դոբրի գյուղում:
4. Դեկտեմբերի 21-ին Բարեգործական երեկո «Մեր եկեղեցին մեր երեխաների» համար խորագրով: Սկիզբը ժամը 18:00, հրավիրում ենք բոլորին:
5. Դեկտեմբերի 21-ին Ձմեռ պապին շնորհավորում է բոլորին Նոր Տարվա կապակցությամբ Մոսկվայում: Սկիզբը 18:30, Կուրիայի դահլիճ, հրավիրում ենք ձեր երեխաների հետ:
6. Դեկտեմբերի 24-ին Ճրագալույցի փառավոր Սուրբ Ծննդյան Պատարագ: Ժամը 15:00
7. Դեկտեմբերի 25 Ծնորհավոր Սուրբ Ծնունդ Հիսուս Քրիստոսի: Ծննդյան փառավոր Սուրբ Պատարագ: Սկիզբը 15:30: Տեղի կունենա Ջրօրհնեքին Հիսուսի քավորի վիճակահանություն:
8. Դեկտեմբերի 31 նախատոնական սուրբ պատարագ: Սկիզբը ժամը 13:00
9. Հունվարի 1-ին ս.Պատարագ, Տոն տնօրինության Հիսուսի: Սկիզբը ժամը 13:00
10. Հունվարի 6-ին Ջրօրհնեք, Չայնավոր ս.Պատարագ ժամը 13:00:
11. Հունվարի 7-ին մեռելոց Պատարագ և պաշտոն հանգստի ժամը 13:00:
12. Ծննդյան և Ամանորյա տոների շրջանը տնօրինեքի ժամանակաշրջան է: Ցանկացողները դիմեն վարդապետին:

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի

Մեր հասցեն՝ ր. Москва, ул. Малая Грузинская д. 19/2

Հեռախոսներ

+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)

+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)

E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it

http://armcatholik.ru



ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սրբերի հիշատակություն

Ս. ԱՆՆԱՅԻ ՀՂՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՍ

ԱՍՏՎԱԾԱԾՆՈՎ 9.12.2014թ.

Ս. Աննայի՝ Սուրբ Աստվածածնով հղիությունը նկարագրված չէ Աստվածաշունչ մատյանում: Այն մեզ է փոխանցվել Եկեղեցու Սրբազան ավանդության շնորհիվ:

Սուրբ Կույսի ծնողները՝ Ս. Հովակիմն ու Ս. Աննան, երկար ժամանակ երեխա չէին ունենում, քանի որ վերջինս ամուլ էր: Մի օր, երբ Աննան իջնում է պարտեզ՝ աղոթելու, հանկարծ հայտնվում է Տիրոջ հրեշտակը և ավետում, որ ինքը զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: Աննան գոհություն է հայտնում Աստծուն, որ լսեց իր անդադրում աղոթքների ձայնն ու խղճաց իրեն: Նա խոստանում է իր զավակին Աստծուն նվիրել:

Նույն այս տեսիլքը երևում է նաև Ս. Հովակիմին՝ հայտնելով բարի լուրը: Սուրբ Կույսի հայրը նույնպես փառք է տալիս Բարձրյալին այդ մեծ շնորհին արժանացնելու համար և իր ընտիր արջառներից ու ոչխարներից մատաղ է անում՝ բաժանելով աղբասներին:

Բարեպաշտ ծնողների աղաչանքները լսելի են լինում և ծնվում է դուստր, ում անվանում են Մարիամ, այսինքն՝ լուսավորված: Նա էր այն ընտրյալ անոթը երկրիս վրա, ում Աստված իր առաքիներությունների ու արժանիքների շնորհիվ պատվեց լինել Բանն Աստծու մայրը: Որպես մայր նա անհանգստացավ, տառապեց իր Որդու համար, սակայն երբեք չերկնչեց ու չընդդիմացավ Աստծուն՝ քաջ գիտակցելով Բարձրյալից իրեն վստահված առաքելության կարևորությունը: Նա առաքինի, հավատավոր մոր, ընտանեկան սրբության պահապանի մարմնացումն է, որին որպես օրինակ պիտի ունենա ամեն մի հայ մայր, ամեն մի հայ աղջիկ, որ պատրաստվում է մայր դառնալ:

Հայ եկեղեցին Ս. Աննայի՝ Սուրբ Աստվածածնով հղիության տոնը հաստատուն կերպով նշում է դեկտեմբերի 9-ին:

<http://www.araratian-tem.am/>

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԶԹԵՍԱՊՈՆԻԿԵԳԻՆԵՐ 1, 1-12

1 Պօղոսը, Սիդուանոսը եւ Տիմոթեոսը՝ թեսաղոնիկեցիներիդ եկեղեցուն՝ մեր Հայր Աստուծով եւ Տէր Յիսուս Քրիստոսով: ²Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: ³Եղբայրնե՛ր, պարտաւոր ենք միշտ գոհութիւն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպէս որ արժանի իսկ է, քանի որ աւելի ու աւելի է աճում ձեր հաւատը, եւ շատանում է ձեզնից իւրաքանչիւրի սէրը միմեանց հանդէպ, ⁴այնպէս որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերութեան եւ հաւատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների եւ նեղութիւնների մէջ, որոնց դուք համբերում էք: ⁵Դրանք ապացոյց են Աստծու արդար դատաստանի, որպէսզի դուք արժանի լինէք Աստծու արքայութեանը, որի համար էլ նեղութիւն էք կրում: ⁶Եւ արդար է Աստծու առաջ, որ ձեզ նեղողներին նեղութիւն հատուցուի, ⁷իսկ ձեզ՝ նեղութիւն կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկնքից՝ իր հրեշտակների զօրքով՝ ⁸կրակի բոցով վրէժ լուծելու համար նրանցից, որոնք չեն ճանաչում Աստծուն եւ չեն հնազանդում մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին: ⁹Նրանց պատիժը պիտի լինի յաւիտենական կործանումը՝ հեռու Տիրոջ ներկայութիւնից եւ նրա փառաւոր զօրութիւնից, ¹⁰երբ նա գայ այն օրը՝ փառաւորուելու իր սրբերի մէջ, հիացմունքի արժանի դառնալու բոլոր հաւատացեալների մէջ (քանի որ մեր վկայութեանը հաւատացիք): ¹¹Ահա թէ ինչու միշտ աղօթում ենք ձեզ համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի դարձնի ձեր կոչմանը, մինչեւ լրացնի ձեր բոլոր փափագները եւ հաւատի գործերը՝ զօրութեամբ, ¹²որպէսզի փառաւորուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը ձեր մէջ, եւ դուք փառաւորուէք նրա մէջ՝ մեր Աստծու եւ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհի համաձայն:

¹²որովհետև Սուրբ Հոգին նոյն ժամին կը սովորեցնի ձեզ, թե ինչ պետք է խօսել»:¹³Ժողովրդի միջից մեկը նրան ասաց. «Վարդապե՛տ, ասա եղբորս, որ ժառանգութիւնը ինձ հետ բաժանի»:¹⁴Եւ նա նրան ասաց. «Ո՛վ մարդ, ինձ ո՞վ դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեր վրայ»:¹⁵Ապա ժողովրդին ասաց. «Տեսէք, որ զգոյշ լինէք ամէն տեսակ ագահութիւնից, որովհետև մարդու կեանքը իր կուտակած հարստութեան մէջ չէ»:¹⁶Եւ նրանց մի առակ պատմեց ու ասաց. «Մի մեծահարուստի արտերը առատ բերք տուեցին. ¹⁷եւ նա խորհեց իր մտքում ու ասաց. «Տեսնեմ ինչ կարող եմ անել, քանի որ բերքս կուտակելու տեղ չկայ: ¹⁸Գիտեմ, - ասաց նա, - թե ինչ պետք է անեմ. կը քանդեմ իմ շտեմարանները եւ աւելի մեծերը կը շինեմ ու այնտեղ կը հաւաքեմ ցորենը եւ իմ ամբողջ բարիքները. ¹⁹ու ինքս ինձ կ'ասեմ՝ ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարտուած բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր եւ ուրա՛խ եղիր»:²⁰Աստուած նրան ասաց. «Անմի՛տ, հէնց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու»:²¹Նոյնպէս է նաեւ նա, ով իր անձի համար զանձ կը հաւաքի եւ Աստուծով չի հարստանայ»:²²Եւ իր աշակերտներին ասաց. «Դրա համար էլ ասում եմ ձեզ. հոգ մի՛ արեք ձեր հոգու համար, թե ինչ էք ուտելու, ոչ էլ մարմնի համար, թե ինչ էք հագնելու, ²³որովհետև հոգին առաւել է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հագուստը: ²⁴Նայեցէ՛ք ագռաներին, որոնք ո՛չ սերմանում են եւ ո՛չ հնձում, որոնք ո՛չ շտեմարաններ ունեն եւ ո՛չ էլ ամբարներ, բայց Աստուած կերակրում է նրանց. որքա՛ն եւս առաւել ձեզ, որ շատ աւելի յարգի էք, քան թռչունները:

Մանկական էջ..

Լրացրո՛ւ սկանվորդը

	Հաշվիր ու գրիր արդյունքը՝ $4+2+1+1+3+2=...$		
↓		↓	
↙			
	Ծանրության միավոր, որը հավասար է 100 կիլոգրամի		«...», գնա, դու չար Աղվես»
		←	
		↙	
			
↓			Անցյալ օրը
↙			
			...ն եկավ մեր բակը Լիբը կծու՞ շալակը
↙		↙	
			

14 ՄԱՇԻՆԿԱ N 13



Դեկտեմբերի 7-ը հիշատակի օր է հայ ժողովրդի համար, երբ 1988թ. երկրաշարժը տասնյակ հազարավոր կյանքեր խլեց և զավակներ որբացրեց: Աղոթենք առ Աստված մեր անմեղ նահատակների հոգիների համար...
Տե՛ր, մի տար մեզ ի փորձություն և պաշտպանի՛ր ի չարե....

Հայ ազգի նահատակներին նվիրված աղոթք

«Ով Աստուծոյ սիրելի նահատակներ,
մեզի ցոյց տուէ՛ք ձեր լուսաւոր դէմքերը,
մեզի յայտնեցէ՛ք գաղտնիքը ձեր ամբողջական
նուիրումին,
մեզի փոխանձեցէ՛ք ձեր սէրը հանդէպ Քրիստոսի,
Աւետարանին եւ Եկեղեցւոյն:
Ով խաչապաշտ հայ նահատակներ,
Դուք, որ աճեցաք Նարեկացիի Մատեանով,
լուսաւորեցէ՛ք մեր մտքերը,
որպէսզի գիտնանք ապրիլ «հայոց
նահատակութիւնը»
մեր ամենօրեայ կեանքին մէջ:
Ամէն»:



«Տեսէք, որ զգոյշ լինէք ամէն տեսակ ազահուփիւնից, որովհետև մարդու կեանքը իր կուտակած հարստութեան մէջ չէ» (Ղուկ.12.15):

Ի՞նչ իմաստ ունի մարադու կյանքը, որ նա ապրում է. չէ՞ որ բարիք գործելով է, որ մարդը սկսում է հասկանալ, որ ինքը մարդ է: Եվ եթե մարդը բարեգործ չէ, ստեղծագործող չէ, ապա Աստծուն նման չէ և մարդ կոչվելու իրավունք էլ չունի: Ուստի, Աստված մեզ կոչել է բարի լինելու և Աստծով հարստանալու, որովհետև ով բարիք է գործում աստվածային օրհնություններն ու շնորհներն են իջնում նրա վրա և Աստծով է հարստանում: Տերը հրամայում է մեզ հոգս չանել վաղվա մասին, այլ մտածել մեր հոգու փրկության մասին, և ուզում է, որ մեր հոգին զարդարենք առաքիներություններով, աղոթքով, արդարամտությամբ, բարի գործերով, եկեղեցի գնալով, միայն բարին խորհելով, խոսելով և գործելով. Մենք, որպէս բանական էակներ, պետք է Երկնքի Արքայությունը փնտրենք և Աստծու արդարությունը խնդրենք: «Դրա համար էլ ասում են ձեզ... դուք հետամուտ եղէք Աստծու արքայութեանը, և այդ ամէնը աւելիով կը տրուի ձեզ» (Ղուկ.12.31):

Ինքնաճանաչման, թե՞ աշխարհի գալու առաջին իսկ պահից մարդ-արարածը ծագում է երջանկության: Այդ երջանկությունը նա հաճախ փնտրում է երկրային կյանքում՝ հարստության, փառքի, մարմնական սիրո, խրախճանքի... մեջ: Բայց, առանց Տիրոջ չկա եւ չի կարող լինել ո՛չ հոգու հանգստություն, ո՛չ երջանկություն: Մարդը խղճի հանգստություն է փնտրում, բայց աշխարհի սին ու դատարկ հոգսերը շեղում են նրան, ստիպում անիմաստ կերպով ծախսել Տիրոջ կողմից իրեն տրված այդքան թանկ ժամանակը, եւ խղճի հանգստություն ձեռք բերելու փոխարեն մնում է դատարկածեռն ու հոգսերին գերի:

Ազահներն իրենց ողջ կյանքում տանջանքով են ապրում, որովհետև միշտ տառապում են գանձեր մթերելու համար, և ցավերով մեռնում: Որքա՛ն անմիտ են ազահները, որ ունեցվածք ձեռք բերելու կամ պահելու համար կորստյան վտանգի մեջ են դնում իրենց կյանքը:

ժլատները, սակավ դրամ խնայելով, կորցնում են իրենց մեծ պատիվը, մինչ պատշաճ էր, որ նրանք ամեն ինչ տային և պահեին պատիվը, որն առավել արժե, քան բոլոր գանձերը:

Ազահության ախտը կարճում է կյանքը. որովհետև ազահը մտքով տանջվում է, թե ինչպես ձեռք բերի չունեցածը, ինչպես պահպանի ունեցածը և սրանով միշտ հյուժվում և մաշվում է: Որովհետև դրամ ձեռք բերելն աշխատանքով է, պահելը՝ երկյուղով, և կորցնելը՝ ցավերով: Ուրեմն՝ ով ճանաչում է իր բնության տկարությունը, թող գանձերից այնքան պահի, որքան իրեն պետք է, իսկ ավելորդով կերակրի կարոտյալներին՝ որպես հավիտենական պաշար. քանզի ամեն ինչ թողնելու է աշխարհում և մերկ գնալու գերեզման: *«Մահը պատահում է խրատ չլտողներին, իսկ անզգամը մեռնում է մեղքերի մեջ»:* (Առակաց, 23.9):

«Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրայ, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց և ո՛չ ժանգ չեն ոչնչացնում, և ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում. քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կը լինեն: (Մատթ. 6, 19-21):

Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու ընդհանուր տեղապահ, Մոսկվայի հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ
Ծ.Վրդ. Հայր Պետրոս Պետրոսյան
Մոսկվա 7 դեկտեմբերի 2014թ.

Թելադրված օրվա Տոնի խորհուրդից՝ նա հիշեցրեց որ սարկավազական ձեռնադրությամբ նրանք նույնպես Աստվածածնի նման հրավիրված են իրենց անձերը տաճարին ընծայելու: Կյանքերը նվիրաբերելու Քրիստոսի Ավետարանին, վկայելու Քրիստոսի կյանքի ճշմարտության մասին, ամուր մնալ հավատքի մեջ և անձնագոհաբար ժառայել Աստծո սուրբ սեղանին:



Մեր մաղթանքն է, որ նորաշնորհ սարկավազները Աստծո շնորհքով և Տիրամոր հզոր պաշտպանությամբ, Մխիթար Աբբահոր բարեխոսությամբ և օրհնությամբ շուտով հասնեն Սուրբ Քահանայության աստիճանին:

<http://armeniancatholic.org/>

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐՍՏԱՑԱՎ

ԵՐԿՈՒ ՍԱՐԿԱՎԱԳՈՎ:

2014թ. Նոյեմբերի 21 -ին, Սուրբ Աստուածածնին տաճար ընծայման տոնի օրը, Վենետիկի Սուրբ Ղազար մայրավանքի եկեղեցու մեջ մատուցվածուրբ Պատարագի ընթացքում Մխիթարյան Միաբանության երկու եղբայրները՝ եղ. Անտոն (Զակքեոս) Գրիգորյանը և եղ. Գևորգ (Սարգիս) Սարգսյանը, սարկավազական կարգ ստացան ձեռամբ Թուրքիայի հայ կաթողիկե համայնքի նորընտիր առաջնորդ՝ Գերապայծառ Լևոն Արքեպիսկոպոս Զեքիյանի:



Սարկավազական ձեռնադրությունից հետո միաբան հայրերի, եկեղեցական դասի և համալսարանական դասընկերների հոծ բազմության ներկայությամբ լսեցին ձեռնադրիչ սրբազան հոր՝ իրենց ուղղված թելադրություններն ու խրատները: Ձեռնադրիչ Արքեպիսկոպոսը իր սերն ու գնահատանքը հայտնեց սարկավազների հանդեպ՝ որոնց ճանաչում էր Հայաստանի Ավանի Մխիթարյան Ճեմարանի օրերից, մաղթելով հյաջողություններ իրենց եկեղեցական սպասավորության մեջ:

ВАНСКАЯ САМООБОРОНА

ВАНСКАЯ САМООБОРОНА 1915, оборонительные бои армянского населения г. Вана и окрестных сел против турецких погромщиков в апреле-мае 1915. Накануне войны в Ване проживали 41 тыс. человек, из них 23 тыс. армяне, остальные — мусульмане, в основном турки. Город делился на две части — Айгестан и Кахакамеч; основная часть армян (20 тыс. чел.) проживала в Айгестане. Эти части города были расположены на расстоянии 5—6 км друг от друга; на территории между ними проживали турки. К апреля 1915 в Ване скопилось свыше 70 тыс. армян, перебравшихся сюда из окрестных сел, которые подверглись нападению турок. Готовясь осуществить чудовищный план уничтожения армянского населения Вана, турецкое правительство назначило наместником Ванского вилайета Джевдет бея, известного своей жестокостью и ненавистью к армянам. Он организовал коварное убийство ряда руководителей армян Вана—депутата турецкого парламента А. Врамяна (Оник Дердзакян), Ишхана (Никогайос Микаелян) и другие; затем, получив подкрепления из Эрзрума, стал готовиться к нападению на Ван. В начале апреля 1915 турецкие войска осадили Айгестан, прервали его связь с Кахакамечом. Армянское население приняло меры для отражения грозящего нападения. Для руководства самообороной был образован единый военный орган («Военный орган армянской самообороны Вана»), в состав которого вошли Арменак Екарян, Арам Манукян, Кайцак Аракел, Булгарацци Григор, Габриел Семерджян, Грант Галикян и Панос Терлемезян. Были созданы службы обеспечения и распределения продуктов, медицинской помощи, оружейная мастерская (в ней было налажено изготовление пороха, оружия, были отлиты две пушки), а также женский союз (занимался в основном изготовлением одежды для бойцов). Перед лицом грозящей опасности сплотились воедино представители различных армянских политических партий (рамкавары, гнчакисты, дашнаки). Против превосходящих сил противника (12 тыс. солдат регулярных войск, большое количество разбойничьих банд, 12 артиллерийских орудий, корабли озера Ван) защитники Вана

располагали не более 1500 бойцами, имевшими лишь 505 винтовок и 750 маузеров с небольшим запасом патронов (Военный орган самообороны отдал указание использовать боеприпасы осмотрительно, «стрелять только, навверняка»). Айгестан был разделен на 5 оборонительных районов, в которых были сооружены 73 позиции. Самооборона началась 7 апреля, когда турецкие солдаты обстреляли армянских женщин, двигавшихся по дороге от с. Шушанц к Айгестану; армяне открыли ответный огонь, после чего началось общее нападение турок на Айгестан. Айгестан подвергся артиллерийскому обстрелу, который причинил значительные разрушения. Но армяне не были застигнуты врасплох; им удалось не только отбить первое нападение турок, но и захватить некоторые их позиции, взорвать турецкий арсенал, здание полицейского управления и т. д. Успешно была организована самооборона и в Кахакамече, хотя здесь армяне находились в еще более неблагоприятных условиях: они были отрезаны от Айгестана, противник обладал многократным превосходством в численности, не хватало оружия и боеприпасов. Здесь также был создан Военный орган самообороны, в состав которого вошли Айказ Косоян, Мигран Торамаян, Левон Галджаян, Давид Саркисян, Саркис Шагинян и другие. Хотя Военный орган Кахакамеча считался отделением Военного органа Айгестана, но в силу обстоятельств он действовал самостоятельно. Линия обороны Кахакамеча была разделена на 4 участка со своими опорными пунктами. 7 апреля, когда турки перешли в наступление, защитники Кахакамеча сумели отстоять свои позиции, уничтожили ряд укреплений турок, нанесли им потери. Первые десять дней Ванской самообороны прошли под знаком удач для обороняющихся. Несмотря на то, что Айгестан подвергался ожесточенному обстрелу, противнику не удавалось прорвать линию обороны армян. Даже ночной штурм, организованный прибывшим из Эрзрума германским офицером, не дал результатов: турки, понеся потери, были отброшены. Защитники действовали отважно, воодушевленные справедливыми целями своей борьбы. В рядах обороняющихся сражалось не мало женщин и девушек. 19-летняя

Искуи Амбарцумян за отличное выполнение боевого задания была награждена орденом «Почетный крест», учрежденным Военным органом. Подростки Вана не только подносили бойцам оружие и боеприпасы, но и сами отважно сражались с врагом. Отличились многие из них: Бабкен (Исаджаниян), Мартирос (Гюлогян), Аслан (Аглянян), Арам (Товмагян, будущий писатель Лер Камсар) и другие. Во второй половине апреля тяжелые бои продолжались. Противник, непрерывно пополняя свои войска, предпринимал попытки прорвать линию обороны ванцев. Продолжался артиллерийский обстрел города. Стремясь привлечь к активным действиям против защитников Вана курдов, Джевдет обещал им богатую добычу. Но и атака курдов была отбита с большими потерями для них. В ходе Ванской самообороны турки свирепствовали в округе Вана, вырезая мирное армянское население и предавая огню армянские села; от рук погромщиков погибло около 24 тыс. армян, были разграблены и сожжены свыше 100 сел. 28 апреля турки предприняли новый штурм, но защитники Вана отбили его. После этого турки отказались от активных действий, продолжая обстрел армянский кварталов Вана. В начале мая передовые части русской армии и отряды армянских добровольцев приблизились к Вану. Турки были вынуждены снять осаду и отступить. 6 мая русские войска и армянские добровольцы вступили в Ван, восторженно встреченные защитниками и населением. Военный орган самообороны обратился с воззванием «К армянскому народу», в котором приветствовал победу справедливого дела над насилием и тиранией. Ванская самооборона — героическая страница истории армянского национально-освободительного движения. За месяц боев турецкие войска понесли серьезные потери (около 1 тыс. человек убитыми); потери армян составили около 350 человек, значит, часть которых составляли мирные жители Вана. Ванская самооборона спасла от неминуемой гибели десятки тысяч васпураканцев, нашедших прибежище в Ване. Самоотверженность и героизм защитников Вана служили вдохновляющим примером для армян других местностей. В Аштаракском районе Армении в память о героической Ванской самообороне воздвигнут памятник.